

---

---

## ՅԱՍԱՇԽԱՐՁԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՍՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՊԱՅՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՃԱՊՈՆԻԱՅՈՒ (1995-2005)

### Բ. Ժ. ԳԻՉՅԱՆ

Երբ 1542 թ. պորտուգալացիները ճապոնիա մուտք գործեցին<sup>1</sup>, Ծագող արևի երկրում սկսվեց մի տևական ու համառ դիմադրություն արևմտյան ներկայության դեմ: Արևմտութիւն ներքափանցման դարաշրջանում սկզբնավորվեց «ճապոնական հնությունների ուսումնասիրություն» կամ «ազգային ուսումնասիրություն» շարժումը (*kokugaku*)<sup>2</sup>: Այն ձգտում էր ճերքագատվել օտար, հատկապես չինական մշակույթի ազդեցությունից և ոքերորդ դարասկզբին վերաբերող ճապոնական առաջին գրավոր աղբյուրները<sup>3</sup> մեկնարանել ճապոնական ոգու ու գաղափարների տեսանկյունից:

Իրադարձությունների ժամանակագրական շարադրանքից առաջ անցնելով՝ ընդգծենք, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ճապոնիայի տնտեսության աննախադեմ զարգացումը, որի շնորհիվ նա աշխարհում «համար առաջին» համբավ ձեռք բերեց<sup>4</sup>, պատճառ դարձավ ճապոնիայի մասին պատկերացումների փոփոխման: Ի հակադրություն ճապոնական ինքնությունը ազգային անցյալի ու մշակութային ժառանգության հետ կապելուն՝ այս դեպքում այն առընչվեց «տնտեսական ազրեսիայի» հետ<sup>5</sup>: Միայն 1990-2000 թթ. «կորաված տասնամյակը», տնտեսական անկումը և 2008 թ. սկզբնավորված համաշխարհային ճգնաժամը նորից լսելի դարձրին դեպի ավանդական մշակույթը կողմնորոշվելու կոչերը մի ժողովրդի մոտ, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդքան

<sup>1</sup> Տե՛ս K. M. Panikkar, *Asia and Western Dominance: A Survey of the Vasco Da Gama Epoch of Asian History, 1498-1945*. London, George Allen & Unwin Ltd, 1959:

<sup>2</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Հագատ Խիրոսի**, *История философской мысли Японии*, М., 1991, էջ 214-234:

<sup>3</sup> Ճապոնական հնագույն գրավոր աղբյուրը՝ «Կոձիկին», գրվել է 712 թ.: Այն ճապոնական առասպելների ժողովածու է և սինտոյականության՝ ճապոնացիների ազգային կրոնի սուրբ գիրքը: 720 թ. պարտված «ճապոնիայի տարեգրությունը»՝ «Նիհոնգին», ներկայացնում է առասպելական և պատմական իրադարձություններն «աշխարհի ստեղծումից» մինչև 7-րդ դար:

<sup>4</sup> Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Է. Վոգելը 1979 թ. գրեց «Ճապոնիան որպես համար առաջին դասեր Ամերիկայի համար» աշխատությունը, որը համարվում է բոլոր ժամանակների ամենաշատ վաճառված գրքերից մեկը (տե՛ս Ezra F. Vogel, *Japan as Number One: Lessons for America*. iUniverse.com, Inc, 1979):

<sup>5</sup> Արդի բանավեճերում առանձնացվում են ազգային ինքնության երկու տիպեր՝ «Երնունչակութային» և «քաղաքացիական» (տե՛ս Bernhard Peters, *A New Look at “National Identity.” European Journal of Sociology*, 2002, № 1, էջ 3-34):

<sup>6</sup> 1990-2000 թթ. տնտեսական անկումն ու ճգնաժամը հայտնի են որպես «կորուսյալ տասնամյակ», որի ըննությանն է նվիրված «Սոցիալական գիտությունները ճապոնիայում» տեղեկատվական ամսագրի 2005 թ. մարտի հասող համարը (տե՛ս 1990s' Japan: The Lost Decade, Social Science Japan: Newsletter of the Institute of Social Science, University of Tokyo, No. 31, March, 2005):

ընդգծված նույնացվում է իր «տնտեսական ազրեսիայի» և նյութական ձեռքբերում-ների հետ:

Արևմուտքի ու արևմտյան մերժափանցման առջև երկիրը բացելու կամ փակելու քննարկումները Շապոնիայում սկզբնավորվել են Տոկուգավաների դարաշրջանում (1603-1868)<sup>7</sup>: 1633 թ. սյուուն Իեմիցուն (1623-1651), վարելով Շապոնիայի հականվրոպականացման բաղաբականություն, այն համարյա թե ամբողջությամբ մեկուսացրեց արտաքին աշխարհից: Սակայն երկիրն իրականում փակ էր պորտուգալացի և խալանացի կարուիկ առաքյալների առաջ՝ կապված քրիստոնեության, այսինքն՝ արևմտյան բարոյաարթեքային համակարգի տարածման հետ, իսկ հոլանդացիների ու «հոլանդական գիտության»՝ աստղագիտության, բժշկության, զինագործության համար Շապոնիան ավելի քաց ու մատչելի էր իր մեկուսացման ամբողջ շրջանում (1633-1854)<sup>8</sup>:

Արևմուտքին հասնելու համար Շապոնիան 1868-1912թթ. զանում էր արդիականացնել իր պետությունն ու տնտեսությունը: Արևմտյան ազդեցությունը «հանկարծ սկսեց պաշտոնապես ողջունվել այնպես, ինչպես նախկինում երեք չեր եղել»: Բազիլ Հոլ Չեմբերլենն<sup>9</sup> այս ժամանակահատվածի մասին գրում է. «Դեմոկրատական զգացմունքներն աճում են այնքանվ, որքանով որ ամերիկյան դեմոկրատական իդեալներն են հասկացվում: Երկրի հանդեպ սերը, քվում է, իր տեղը զիջում է օտարի առաջ անմռունչ զլուխտնարհմանը: Զինովիկիները, բնականաբար, վախեցած են ազգային անհատականության այս նահանջից»<sup>10</sup>:

Այսուհետք, Արևմուտքի ազդեցության ավելի քան կեսդարյա ժամանակահատվածը նախապատերազմյան տարիներին հանգեցրեց իրադարձությունների կտրուկ շրջապարհի: 1930-ական թվականներին տիրապետող դարձավ ծայրահեղ ազգայնականություն՝ ուղղված Արևմուտքի և արևմտյան ազդեցության դեմ: Սա իր անդրադարձն ունեցավ արևմտյան մշակույթի և լեզուների հանդեպ վերաբերունքի վրա: Այդ տարիների մասին Վալտեր Լաֆերերը<sup>11</sup> գրում է. «Շապոնացիների շրջանում երկար պատմություն ունի իրենց մասին այն կարծիքը, որ իրենք առանձնահատուկ ու ավելի բարձր ժողովուրդ են. որպես դրա հաստատում նրանք վկայակոչում են, որ իրենք ունեն ռազմական, քաղաքական ու մշակութային ձեռքբերումներ... Այսուհետք, 1930-40-ական թվականներին, երբ ճապոնական ռասսիզմը պատերազմական մեծ զաներ էր գործադրում, այն հիմնվում էր ոչ թե զիտության, այլ պատմության վրա: Համաձայն վիպասանների, ծաղրանկարիների, լուսգրողների ու պաշտոնական գաղափարախոսների՝ Շապոնիայի մեծության ու վերջնական հաղթանակի աղբյուրը կայսրն էր, որը սերում էր 2600 տարի առաջ ապրած կայսր Չիմմուից, և որն Արևի աստծո ուղղակի ժառանգորդն էր: Որևէ այլ

<sup>7</sup> 1603-1868 թթ. Շապոնիան կառավարում էին Տոկուգավաս տոհմի զինվորական դիկտատորները: Այդ ժամանակահատվածը հայտնի է նաև Էդոյի դարաշրջան՝ Տոկուգավաների մայրաքաղաք Էդոյի (ժամանակակից Տոկուոն) անունով: Քաղաքացիական տևական պատերազմներից հետո Տոկուգավաները հաստատեցին ավելի քան 250 տարի տևած խաղողության դարաշրջան:

<sup>8</sup> Այդ մասին տես՝ Robert Bellah, *Imagining Japan: The Japanese Tradition and its Modern Interpretation*. The University of California Press, 2003, Introduction.

<sup>9</sup> Բազիլ Հոլ Չեմբերլեն (1850-1935), Շապոնիայի բրիտանացի նշանավոր ուսումնասիրող, Տոկուոյի կայսերական համալսարանի պրոֆեսոր:

<sup>10</sup> Basil Hall Chamberlain, *Japanese Things: Being Notes on Various Subjects Connected with Japan*. Rutland and Tokyo, Charles E. Tuttle Co., 1971, p. 532.

<sup>11</sup> Ամերիկացի նշանավոր պատմաբան (ծնվ. 1933 թ.):

ժողովուրդ չեր կարող հավակնել նման ծագումնաբանության: 1937 թ. կրթության նախարարությունը հայտարարում էր, որ մյուս ռասաներն «ապականված են ու ոչ մաքուր»: Ծապոնացի որոշ հայտնի հրապարակախոսներ քարոզում էին, որ հատկապես ամերիկյան ազատականությունն ու այսպես կոչված ինդիվիդուալիզմն ապականություն են, քանի որ նման հասկացությունները միայն քողարկում են հրեաների «հրեային պլոտոկրատիան»՝ հարուտների կողմից աղքատների շահագործումը և համայնքի քայրայումը»<sup>12</sup>:

Եթե նոյնիսկ ԱՄՆ-ի արտաքին հարաբերությունների հայտնի պատմաբան Վ. Լաֆեբերի գնահատականներն արտահայտում են «որոշ առումով սահմանափակ և լրկալ շահերով պայմանավորված ակադեմիական միջավայրի»<sup>13</sup>, այսինքն՝ ամերիկյան շահերից բխող ԱՄՆ-ի ակադեմիական միջավայրի ազդեցությունը, այսուհանդերձ, երբ նա ընդգծում է, թե «1930-40-ական թվականներին, երբ ճապոնական ռասսիզմը պատերազմական մեծ ջանքեր էր գրղծադրում, այն հիմնվում էր ոչ թե գիտության, այլ պատմության վրա», ապա դիպուկ է բնութագրում իրավիճակը նախապատերազմյան և պատերազմի տարիներին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, ի հակառակություն «արևնոյան գիտության», ճապոնական պաշտոնական գաղափարախոսությունը և «Ճապոնիայի պատերազմական ջանքերը» հիմնվում էին պատմության սինտոյական առասպեկտի վրա: Այս տեսանկյունից բնութագրական է, որ 1945 թ. սեպտեմբերին ճապոնիայի կայսիության գուգահեռ, ապագա կայսր Ակիհիտոն իր օրագրում ԱՄՆ-ի և Սևծ Բրիտանիայի մասին գրում էր. «Պատերազմ վարելու նրանց մերողներն աշքի են ընկնում մտածվածությամբ և ժամանակակից գիտական մոտեցմամբ»<sup>14</sup>: Իսկ ըստ ճապոնիայի կայսր Հիրոհիտոյի (1926-1989)՝ «ճապոնացի գինվորականությունը, մոռանալով գիտության նվաճումները, ստվոր է հույսը դնել միայն ոգու ուժի վրա... գեներալներն ի վիճակի չեղան մտածելու ավելի լայն... անհրաժեշտ է մշակել կողեկտիվ բանականությունը և զարգացնել գիտությունը»<sup>15</sup>:

1945 թ. հաջորդած դարաշրջանում ճապոնիան կողմնորոշվեց դեպի արևմբույան գիտությունը, կրթությունը, ինտեգրվեց արևմտյան տնտեսական ու քաղաքական կառույցներին և անգլո-ամերիկյան ուժային առանցքին: 1951 թ. սեպտեմբերին ստորագրվեց «Ճապոնա-ամերիկյան անվտանգության պակտը»: Իր գարզացման կարիքների բավարարման համար երկիրը պետք է ներմուծեր արևմտյան գիտություն, կրթություն, և ակնկալվում էր օտարերկրացիների լայն մասնակցությունը ճապոնական տնտեսությանը, համալսարանների ու գիտական կենտրոնների կյանքին: Իսկ հետագայում՝ վարչապես Յասուհիկո Նակատնեի իշխանության օրոք (1982-1987), «Ճապոնիայի միջազգայնացումը» և «միջազգային երկիր ճապոնիայի» կառուցումը դարձավ պաշտոնական քաղաքականություն՝ Այսուհանդերձ, հետպատերազմյան ամրող դարաշրջանում ճապոնիայում դրսորվել է:

<sup>12</sup> Walter LaFeber, *The Clash: A History of US-Japan Relations*. New York and London: Norton, 1997, pp. 217-218.

<sup>13</sup> Այսական ուսումնասիրությունների ընկերակցության սոցիոլոգիայի բաժանմունքի վարիչ Պ. Սթեյնհոֆի ձևակերպումն է: Մանրամասն տես ճապոնական անտրոպոլոգիական ընկերակցության նիստում նրա ելույթի տեքստը՝ **Patricia G. Steinhoff**, *Studying Conflict in Japan Since 1984*:

<sup>14</sup> Սեցերումն ըստ **Герберт Բիկս**, *Хирохито и создание современной Японии*, М., 2002, էջ 462:

<sup>15</sup> Նոյն տեղում:

<sup>16</sup> Այդ մասին տես **Mayumi Itoh**, *Globalization of Japan: Japanese Sakoku Mentality and US Efforts to Open Japan*. New York: St Martin's Press, 1998, էջ 6:

խտրականություն այն նույն օտարերկրացի մասնագետների ու արևմտյան լեզուների հանդեպ, որոնց կարիքը երկիրը զգում էր: 1985-1986 թթ. ճապոնական մամուլում և բրիտանական «Նեյչըր» ամսագրում տպագրվեցին հոդվածներ ճապոնական համալսարաններում գոյություն ունեցող «ակադեմիական ապարտեհիդ» (academic apartheid)<sup>17</sup>, այսինքն՝ բարձրագույն կրթության համակարգում ոչ ճապոնացի ուսուցանողների հանենակ գոյություն ունեցող խտրական վերաբերմունքի մասին<sup>18</sup>:

1995 թ. ճապոնական զանգվածային տեղեկատվության միջոցները լուսաբանեցին ազգային համալսարաններից օտարերկրացի դասախոսների վտարումները<sup>19</sup>: Օտարերկրացիները վտարվում էին՝ հաշվի չառնելով նույնիսկ աշխատանքային բարեխղճությունն ու մասնագիտական իրազեկության որակները: Նրանք հատուկ նամակով դիմեցին Տոկիոյում ԱՄՆ դեսպան Վ. Սոնդեյին, որում գրում էին, թե օտարերկրացիների բվի կրճատումը «վկայությունն է ազգային, ինչպես նաև տարիքային պարբերաբար ընթացող պաշտոնապես հաստատված խտրականության», «հակասում է միջազգային ակադեմիական համայնքում աշխատանքի տրամադրման ընդունված պրակտիկային... և համազգային հատուկ քաղաքականությունն է, որը կիրառվում է միայն օտարերկրացիների հանդեպ»<sup>20</sup>: Նրանց կարծիքով՝ ճապոնիան, ճապոնական համալսարաններն ու այնտեղի կրթության որակը տուժելու են «ակադեմիական ապարտեհիդ» և ճապոնիայի ինքնամեկուսացման քաղաքականության պատճառով<sup>21</sup>:

«Օտարերկրացի ուսուցանող» (foreign teacher) խիստ խտրական համակարգը գործում է սկսած 1893 թվականից: Դրա գործունեության հետևանքով ծախողվում է օտարերկրացի գիտնականների ինտեգրումը ճապոնական ակադեմիական համակարգ: Համաձայն մեկդարյա պատմություն ունեցող այս համակարգի՝ օտարերկրացիները ստանում էին ավելի բարձր աշխատավարձ, բայց նրանք չէին կարող գրադեցնել պրոֆեսորի պաշտոն, մասնակցել ֆակուլտետի կամ բաժանմունքի ժողովներին և լինել ուսանողների ավարտական թեզերի դեկանականներ: Օտարերկրացիները՝ պրոֆեսորից մինչև դասախոս, որակվում էին որպես «օտարերկրացի ուսուցանող» և կազմում ակադեմիական կազմի ամենացածր աստիճանը: Նույնիսկ այսօր օտարերկրացի ուսուցանողները լավագույն դեպքում համարվում են օտարերկրյա տեխնիկական խորհրդատուներ և ոչ թե գիտելիքների ու ճշմարտության

<sup>17</sup> Տե՛ս Fair Play for Foreigners: Japan is Committed to Internationalization. But Recent Events Suggest It Must Look Again (ed.). *Nature*, October 10, 1985, Vol 317, No. 6037, նաև՝ Tsukuba University: Turmoil over Treatment of Foreign Staff (ed.). *Nature*, October 10, 1985, Vol 317, No. 6037:

<sup>18</sup> «Ակադեմիական ապարտեհիդ» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ա. Սիսինը «Ասահի հվիմնականություն» լրագրում (տե՛ս Alex Shishin, Academic Apartheid in Japan: Foreign Teachers are Discriminated Against. Asahi Evening News, July 31, 1986), բայց այն լայն տարածում ստացավ ամերիկացի պրոֆեսոր Ի. Հոլլի «Մորիգուչի Կենձու մասնակիությունը՝ Ճապոնիայի մասին» աշխատանքում (տե՛ս Moriguchi Kenzo, Contracts Elude Senior Foreign Teachers, The Japan Times, April 14, 1995):

<sup>19</sup> Օտարերկրացի մասնագետների վտարումներին ճապոնական մամուլի արձագանքների մասին տե՛ս Moriguchi Kenzo, Contracts Elude Senior Foreign Teachers, The Japan Times, April 14, 1995:

<sup>20</sup> Open Letter to Ambassador Mondale. Japan Policy Research Institute, Working Paper No. 9, May 1995 (<http://www.jpri.org/>):

<sup>21</sup> Տե՛ս Ivan P. Hall, Academic Apartheid Revisited. Japan Policy Research Institute, Working Paper No. 9, May, 1995 (<http://www.jpri.org/>):

որոնման հավերժական պրոցեսի գործընկերներ: Նրանք երեք չեն ունեցել արդյունաբերական զարգացած երկրների համալսարաններում աշխատող ճապոնացի մեծարիկ մասնագետների ակադեմիական ազատությունը<sup>22</sup>: 1982 թ. ճապոնիայում տեղի ունեցած օրենսդրական փոխիշություններ, և հաստատվեց «օտարերկրացի հաստիքային աշխատակից» (foreign staffer) համակարգը: Այն նպատակ ուներ «միջազգայնացնել» ազգային համալսարանները: Վերոհիշյալ Ի. Հոլլը այս նոր համակարգի մասին գրում է. «Ի պատասխան արտաքին խոր քննադրասության՝ 1982 թ. նոր օրենսդրությունն օրինականացրեց ճապոնական ազգային, արեգակատուրալ և մունիշիպալ համալսարաններում օտարերկրացի դասախոսների վարձակալումն այն նույն պայմաններով, որոնք սահմանված են ճապոնացի ակադեմիական անձնակազմի համար, բայց մի էական բացառությամբ... այն օրինագիծը, որը անցավ, աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի որոշումը թողեց տվյալ համալսարանի հայեցողությանը: Տասներկու տարի անց՝ 1994 թ., միայն չորս օտարերկրացիներ (երկուոր՝ Տոկիոյի, երկուոք՝ Կյույտոյի համալսարաններում) ստացան բաց ամսաթիվը և կոնկրետ ժամկետով չսահմանափակված պաշտոնները, ինչպես իրենց ճապոնացի գործընկերները: Բոլոր մյուս ազգային համալսարանները նախընտրեցին կարճաժամկետ պայմանագրերը՝ միշտն հաշվով մոտ երեք տարի տևողությամբ»<sup>23</sup>:

Ծապնական հաճախարանների նոր «օտարերկրացի հաստիքային աշխատակիցն» այժմ գրադեցնում է ակադեմիական պաշտոններ, մասնակցում ակադեմիական ժողովներին, բայց ունի կառավարման շատ ավելի թիւ լիազորություններ, քանի որ կախված է ճապոնացիների կամքից՝ իր պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման հարցում:

1992 թ. Ծապնիայում «օտարեկրացի հաստիքային աշխատակից» կատեգորիայի տակ աշխատում էին 2.685 օտարեկրացիներ<sup>24</sup>: Հակառակ դրա՝ Ծապնացի մեծարիվ գիտնականների մշտական ներկայությունն արևմտյան համալսարաններում սովորական է: Հաս «Ծապնիա հիմնադրամի»<sup>25</sup>, ԱՄՆ-ում և Կանադայում միայն ծապնագիտական ուսումնափրությունների ոլորտում աշխատում են 1.420 ծապնացի մասնագետներ<sup>26</sup>: Վերջին երեսուն տարիներին Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական բարձր զարգացած երկրներում, Հյուսիսային Ամերիկայում և Բրիտանական համագործակցության երկրներում (British Commonwealth, Անգլիական միունիոն) համալսարանները բաց են եղել բարձր որակավորում ունեցող բոլոր նորեկների առաջ: Իսկ ԱՄՆ-ում և Բրիտանական համագործակցության երկրներում մասնագետների հավաքագրումն ընթացել է համաշխարհային մակարդակով<sup>27</sup>:

<sup>22</sup> Stiu Ivan P. Hall, Academic Apartheid at Japan's National Universities. Japan Policy Research Institute, Working Paper No. 3, October 1994 (<http://www.jpri.org/>):

<sup>23</sup> Առաջ սեղում:

<sup>24</sup> 1992 թ. ճամփոնական համալսարանների լրիվ դրույքով աշխատակիցների թիվը 129 հայ. էր (տե՛ս նույն տեղով):

<sup>25</sup> «Ճապոնիա հիմնարդարամի» (Japan Foundation) նպատակը ճապոնական մշակույթի տարածումն է: Այն հիմնարդիկ է 1972 թ. ճապոնական պատվանդանութիւնների հասուկ օրինագիծի հիման վրա: 2003 թ. «Ճապոնիա հիմնարդարամ» դարձավ անկախ վարչական միավոր՝ ճապոնիայի արտաքին գործերի նախարարության ենթակայության ներքո:

<sup>26</sup> Սանրամասն տես Ivan P. Hall, Academic Apartheid Revisited.

<sup>27</sup> Κακητήδημα καν απωρηθητή; φημιτριών εργασίαν διετάριψε την ιδιότητα της συνέπειας.

«Դրսնորելով ակադեմիական ապարտեհիդ,- զրում է անգլո-ամերիկյան ակադեմիայի ներկայացուցիչ Ի. Հոլլը,- Ծապոնիան մերժում է այն մասնագիտական որակներն ու իրազեկությունը, որնք ուղղակիորեն հիմնված են ազգային, եթիկ, մշակութային ու մարդկային բազմազանության վրա: Ծապոնիան ճապոնական կրթության ու հասարակության կառուցման ընթացքում խուսափում է ազգային ու եթիկ պատկանելության վրա հիմնված մարդկային բազմազանության ներգրավումից: Սա ճապոնական համալսարաններին զրկում է ոչ միայն այն գիտական արտադրանքից ու արդյունքից՝ հանուն որի արևմտյան համալսարաններն իրականացնում են միջազգային հավաքագրում, այլ նաև բարի կամքից ու արտերկրի մտավոր վերնախավի հետ փոխանակումից, որի կարիքը ճապոնիան խստորեն զգում է իր տնտեսության ու պետության զարգացման պահանջների բավարարման և իր միջազգային պարտավորությունների կատարման համար»<sup>28</sup>: Այն ճապոնացիները, որնք անհրաժեշտ են համարում օտարերկրացի արդիտեսությունից ավելի մեծ ներկայությունը ճապոնական կրթության ու գիտահետազոտական համակարգում, ընդգծում են, որ դա կծնավորի նոր դինամիկ հոսանքներ ու մարտահրավեր կնետի ճապոնացի ակադեմիականներին: Նրանք գտնում են, որ դիմադրության իրական պատճառը ճապոնական ակադեմիականների այն մտավախությունն է, թե օտարերկրացիների ներկայությունը կմեծացնի մրցակցությունն իրենց համար: Նրանք վախենում են (իրավացիորեն կամ անհիմն կերպով), որ օտարերկրացիները կիրատարակեն ավելի ծավալուն ու հարուստ գիտական աշխատություններ, իրենք կունենան ավելի քիչ դասախոսություններ, կառաջանան զանազան ինտելեկտուալ հակասություններ ու կոնֆլիկտներ: Մյուսներն ել կարծում են, որ օտարերկրացիները սոցիալապես չեն մերժվի ճապոնական ակադեմիական համայնքին ու հասարակությանը<sup>29</sup>:

Այսուհետեւ, օտարերկրացիների մերժումը կամ բացառումը ճապոնիայի տնտեսական ընդլայնման ժամանակաշրջանում միայն հեռավոր արձագանքն է Տոկուգավանների դարաշրջանում օտարերկրացիների վտարման: Առաջին հայացքից բխում է, թե արդի ճապոնիայում խրախուսվում է օտարերկրացի մասնագետների ընդգրկումը: Գ. Հեյջը սա անվանում է «ընդգրկման և բացառման դիալեկտիկա»<sup>30</sup>: S. Նակամացուն ճապոնիայի միջազգայնացումը որակում է որպես օտարերկրացիների «օտարում», բայց ոչ թե նրանց բացառման, այլ ընդգրկման միջոցով<sup>31</sup>: Նմանապես, Ն. Սուձուկին ճապոնիայի միջազգայնացման «ամենոր տարածված քաղաքական ճարտասանությունը» դիտում է որպես օտարածին միավորներին ներգրավելու, այնուհետ մեկուսացնելու և վերահսկելու փորձ: Օտարերկրացիներին «ներառում» են, բայց նրանց օղակում են առանձնահատուկ կատեգորիաների սահմաններում: Նրանք մարզինալացվում են, նրանց հեռու են պահում

նոյնիսկ Ֆրանսիայում 1960-ական թվականների ռեֆորմներից հետո էլ օտարերկրացի գիտնականները կարող են գրավել բոլոր պաշտոնները՝ բացառությամբ ամենաբարձր վարչական պաշտոնների: Նմանապես Գերմանիայում, որտեղ ակադեմիական աշխատողներն առանձին երկրամասերի հանրային ծառայողներ են, 1970-ական թվականներին վերացվել են դասախոսական կամ վարչական ցանկացած պաշտոնում օտարերկրացի գիտնականների վարձակայման և առաջխաղացման բոլոր սահմանափակումները:

<sup>28</sup> Ivan P. Hall, Academic Apartheid at Japan's National Universities.

<sup>29</sup> Տե՛ս նոյն տեղը:

<sup>30</sup> Մեջբերումն ըստ Chris Burgess, Maintaining Identities: Discourses of Homogeneity in a Rapidly Globalising Japan. Electronic Journal of Contemporary Japanese Studies, April 2004, էջ 5 (<http://www.japanesestudies.org.uk/articles/Burgess.html>):

<sup>31</sup> Տե՛ս նոյն տեղը:

ակադեմիական կառավարման լծակներից, ինչպես նաև մերժում որոշումների կայացմանը և համայնքային կյանքին ամբողջական մասնակցությունը<sup>32</sup>:

Ինչպես օտարերկրացի մասնագետների, այնպես էլ անգլերենի՝ ճապոնիա ներքափանցելու հարցում գործում է նույն «ընդգրկման և բացառման դիալեկտիկան»: Անգլերենն օգտագործվել է «Արևոտքին հասնելու և նրանից առաջ անցնելու» համար, սակայն միաժամանակ բացառվել է այն կատարյալ տիրապետելու հնարավորությունը և սահմանափակվել նրա ազդեցությունը:

Ճապոնիայում գոյություն ունի անգլերենի ուսուցիչների մի ամբողջ լեզեն, որը չի տիրապետում խոսակցական անգլերենին<sup>33</sup>: 1999 թ. «Անգլերենը որպես օտար լեզու» թեստից (TOEFL) ճապոնացիների հավաքած 498 միավորը (677 հնարավորից) ամենացածրն էր ասիական երկրներում: Խսկ 2000 թ. ճապոնացիները անգլերենի իմացությամբ տասնութերորդն էին քաննմեկ երկրների մեջ<sup>34</sup>: Ըստ մասնագետների՝ ճապոնացիների՝ այսպիսի արդյունքների հիմնական պատճառը անգլերենի և ճապոներենի արձատական տարրերությունն է. ճապոնացիները մտածողությամբ տարրերում են անգլիախոս ժողովորդմերից: Ճապոնիան, ինչպես Ֆիլիպինները, Սինգապուրը կամ Մալայզիան, երբեք չի գաղութացվել Մեծ Բրիտանիայի կամ Միացյալ Նահանգների կողմից և բրիտանական նախկին գաղութների նման երբեք չի ունեցել անգլերենի վրա հիմնվող հանրային կրթության համակարգ<sup>35</sup>: Ճապոնիան միատարր երկիր է, որի ազգարնակշուրյան 99 %-ի համար ճապոներենը մայրենի լեզու է, և անգլերենի դասավանդումը զիսավորապես թերականության ու թարգմանության ուսուցման ուղղվածություն ունի: Դրա առաջնահերթ նպատակը եղել է այնպիսի տեղեկատվության մատչելիության ապահովումը, որն անհրաժեշտ էր արևմտյան գիտական տեխնոլոգիաների ձեռքբերման և Արևոտքից առաջ անցնելու համար:

Անգլերենի տիրապետում միայնակ հասնելու ջանքերի ծախողումն արդիական դարձրեց այնպիսի ուսուցիչների «ներմուծումը», որոնց համար անգլերենը մայրենի լեզու է: Սակայն օտարերկրացի ուսուցիչներն անխուսափելիորեն բախվում են ճապոնական ինստիտուցիոնալ ու հանրային անհանդուրժողականությանը<sup>36</sup>:

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>33</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Jean-Pierre Lehmann, Japan in the Global Era: English-Language Deficit Handicaps Japan. The Japan Times, Feb. 4, 2002, ինչպես նաև՝ Alex Shishin, Why Can't Taro Speak English: He May Have an English Teacher Who Loathes the Language of Shakespeare and Milton. The East, Vol. 34, No. 6, March / April 1999:

<sup>34</sup> Անգլերենի շինական դասագրքերը կազմում են մոտ 1000 էջ, հարավկորեական դասագրքերը՝ 830 էջ, իսկ ճապոնական դասագրքերը՝ ընդամենը 330 էջ: Ճապոնական դասագրքերը ներառում են 950 քառ., հարավկորեականը՝ 1300, իսկ շինականը՝ 1400 (այդ մասին տե՛ս Shinichiro Noriguchi, Improve English Education, or Lag Behind Rivals. The Asahi Shimbun, March 3, 2007): 2008թ. դեկտեմբերին կրթության նախարարության հրապարակած նոր հրահանգներում նշվում է ճապոնական դասագրքերում անգլերենի բառապաշարը 1800-ի հասցնելու անհրաժեշտության մասին (տե՛ս Cram-Free Policy Ditched in Plan for High Schools. The Yomiuri Shimbun, Dec. 23, 2008):

<sup>35</sup> Այս առնչությամբ Մինիիրո Նորիկուչին նշում է, որ անգլերենի իմացությունը պահանջում է «քրտնաջան աշխատանք», որը «անհանձմատ ավելի ցանկալի է, քան գաղութացումն անգլիախոս օտար տերության կողմից» (մանրամասն տե՛ս Shinichiro Noriguchi, Improve English Education, or Lag Behind Rivals. The Asahi Shimbun, March 3, 2007):

<sup>36</sup> Օտարերկրացի ուսուցիչների ներկայությունը ճապոնիայի տարրական դպրոցում քույլատրվում է միայն կրթության նախարարության հատուկ ծրագրերով: Մինչև 2002 թ. տարրական դպրոցում անգլերենը չեր ուսումնասիրվում: Գոյություն ուներ մտավախություն, որ երեխաներն իրենց կզգան պակաս ճապոնացի, եթե երկրորդ լեզուն ուսուցանվի վաղ հասակից:

Այդ մասին Ա. Սիսինը նշում է. «Անգլերենին դեմ գնացող անգլերենի ուսուցիչն ունի կարևոր ներկայություն ճապոնական ակադեմիական հաստատություններում»<sup>37</sup>:

Հանգույցյալ վարչապետ Կեյձո Օրուչի (1998-2000)՝ անգլերենը պաշտոնական լեզու դարձնելու 1999 թ. կոչու, ինչպես և սպասվում էր, մերժվեց անգլերենի ուսուցիչների կողմից: «Մայնիսի Դեյլի Նյուսի» 2000թ. մարտի 17-ի համարում թերթի բորբակիցը շարադրում է անգլերենը պաշտոնական լեզու դարձնելու և «անգլերենի լեզվական իմպերիալիզմի» (English linguistic imperialism) առնչությամբ Սեյծոյի համալսարանի պրոֆեսոր Կ. Նակամուրայի մտավախությունները: Դրանցից մեկն այն է, որ «կը ճապոներենը», մյուսը, որ երկու լեզու սովորելը կարող է ծանրաբեռնել երեխաներին: Նակամուրան առաջ է քաշում այն տեսակետը, որ ճապոնացիների Մեյձի դարաշրջանի (1868-1912) նախահայրերն անգլերեն ավելի լավ էին խոսում, քանի որ նրանք ճապոներենն ավելի լավ գիտեին: Նա տարակուսում է, թե արդյոք նրանք, ովքեր անգլերեն են սովորում, կարող են ասել, որ իրենք կատարելության են հասել ճապոներենի մեջ և ըմբռնում են ճապոնական մշակույթը: Այդ իրավիճակում նրանք չանուք է հղեան իրենց անգլերենը, այլ պեսոք է կենտրոնանան ճապոներենի վրա: Ըստ Նակամուրայի, եթե անգլերեն են սովորում առանց մայրենի իմացության մեջ կատարելության հասնելու, ապա մենք ականատես ենք լինում «անգլերենի ստրուկտուրի ծննդին»<sup>38</sup>: Նակամուրայի այս դիտարկումն ուղղակի առնչություններ ունի գրականության մեջ գոյություն ունեցող այն կարծիքի հետ, որ Արևմուտքի և գլոբալացման ազդեցության պատճառով, երբ ոչնչանում են լոկալ մշակույթները, Արևելքի երկրները մտնում են ինքնության ճգնաժամի երկարատև դարաշրջան, որն արդյունք է նրանց ավանդական արժեհամակարգի կործանման, և որից նրանք կարող են խուսափել իրենց մշակույթի և արդիականության համադրման միջոցով:

Անգլերենը պաշտոնական լեզու դարձնելու դեմ Նակամուրայի բերած մյուս փաստարկն այն է, որ դա կարող է հաստատել «անգլերենի լեզվական իմպերիալիզմ», այսինքն՝ այն պաշտոնական լեզու դարձնելն օգնում է նրա՝ ունիվերսալ լեզու դառնալուն»<sup>39</sup>: Իսկ ճապոնիա ներթափանցող օտարերկրյա աշխատուժն ընկալվում է որպես «սարսափելի ուժ» և աջակցություն «անգլերենի լեզվական իմպերիալիզմի» հաստատմանը: Նակամուրան հայտարարում է. «Պատմականորեն երեք պատճառ կա լեզվին պաշտոնական ստատու տալու համար: Առաջին՝ գերիշխող ժողովորդն իր լեզուն պարտադրում է ենթակա ժողովորդն: Երկրորդ՝ ուրիշի գերիշխանության տակ հայտնված ժողովորդներն իրենց լեզվին պաշտոնական ստատու են տալիս նրա գործածությունը վերահսատատելու համար: Երրրորդ՝ պաշտոնական ստատու է տրվում այն լեզվին, որը որևէ բազմամշակութային երկրում, օրինակ, Սիացյալ Նահանգներում, ծառայում է որպես հաղորդակցության միջոց: Ժամանակակից ճապոնիայում չկա այս պատճառներից և ոչ մեկը ու ճապոներենը ծառայում է որպես պետության ինքնության խորհրդանշից: Հարյուրավոր տարիներ ճապոներենը գոյություն է ունեցել որպես ինքնուրույն լեզու, և, անշուշտ,

<sup>37</sup> Alex Shishin, The Problem of Xenophobia and the Teaching of English at Japanese Universities. Erfurt Electronic Studies in English, No. 7, 2002 ([http://webdoc.gwdg.de/edoc/ia/eese/journal\\_frame.html](http://webdoc.gwdg.de/edoc/ia/eese/journal_frame.html)).

<sup>38</sup> St'u Kazuo Kojima, Language Expert Closes Book on Official English, Mainichi Daily News, March 17, 2000:

<sup>39</sup> St'u նույն տեղը:

ճապոներենն արհեստականորեն անգլերենով փոխարիմելու գաղափարը ոչ հաճախ հանդիպող գաղափար է»<sup>40</sup>:

Լեզվաբան S. Սուձուկին *Japan Echo*-ին տված հարցազրոյցում, որը վերնագրված է «Անգլերենի ուսուցմանն ավելի մեծ ուշադրություն», թեև մերժում է այն տեսակետը, որ անգլերենի ներխուժումը ճապոնացիների առօրյայի մեջ ձևավորում է «անգլերենի լեզվական իմացերիալիզմ», այսուհանդերձ կարծում է, որ «անգլերենն այսպես թե այնպես բռնության գործադրում է ճապոնիայի հանդեպ»: Այս կապակցությամբ հիշեցնելով 1991թ. Զորջ Բուշ Ավագի՝ ճապոնիա կատարած այցի ժամանակ նրա և վարչապետ Կիհչի Միածնավայի (1991-1993) միջև անգլերեն կայացած առանձնազրոյցի փաստը՝ գրում է. «Դժբախտաբար պարուն Միածնավան լիիվ արհամարհում է «լեզվական սուվերենության» կոնցեպցիան: Այն ժամանակ, երբ վարչապետ էր, նա Միացյալ Նահանգների նախագահ Զորջ Բուշի ճապոնիա այցելության ժամանակ մոտ երկու ժամ նրա հետ անցկացրեց առանց թարգմանչի: Ներկա էր միայն մի սղագրող: Ես չգիտեմ, թե ինչ կարծիք ունի Միածնավան անգլերենի իր իմացության մասին, բայց անգլերեն բանակցությունները վարելը նշանակում է մյուս կողմի հիմնական պայմանների ընդունում: Դիվանագիտության զգայուն աշխարհում սա հավասարազոր է լեզվական հավասարությունից հրաժարման»<sup>41</sup>:

Լեզվաբանը կարծում է, որ այսուհետև անգլերեն սովորելու ճապոնացիների նպատակը պետք է լինի ոչ թե այլ մշակույթներին ծանրացումը կամ բարիդրացիական հարաբերությունների ձևակորումը, այլ «այն ուսանողների քաջալերումը, որոնք կարող են ճապոնիայի առանձնահատկությունները բացատրել նրանց, ովքեր անձանոր են երկրին»<sup>42</sup>: Նա միջազգային փոխանակությունը քննում է բանավեճի ու կոնֆլիկտի տեսանկյունից և շեշտում, որ միջազգայնացման ու միջազգային փոխանակման իրական նպատակը «տարբեր ազգությունների մարդկանց միմյանց հետ բանավեճն է՝ առանց վնասելու նրանց հարաբերություններին»<sup>43</sup>: Եվ վերջապես, նա ցանկանում է բացառել օտարերկրյա տեքստերի օգտագործումն անգլերենի ժամերին և ընդգծում, որ պետք է օգտագործել ճապոնիայում տպագրված անգլիալեզու թերթերը: Եթե նյութը վերաբերում է ճապոնական իրադրություններին, ապա այն, ինչի մասին խոսվում է, ավելի ծանոթ է և ավելի մեծ է հավանականությունը, որ նույնիսկ դժվար բառերը կարող են հասկացվել, հետևաբար «անգլերենի ժամերին պետք է օգտագործվեն ճապոնական պատմության, հասարակության կամ գրականության հետ առնչվող տեքստեր, իսկ ուսուցման ավելի բարձր մակարդակներում պետք է ավելացվեն նաև անգլերեն դասավանդվող ոչ լեզվական դասընթացներ»<sup>44</sup>:

Չնայած օտարերկրացի մասնագետների և անգլերենի հանդեպ մշտապես դրսևորված զգուշավորությանը՝ հատկապես ճապոնիայի տնտեսական զերտերություն դառնալու օրվանից անգլերենը քրտնաջանորեն ուսումնասիրում են ամենուր: Ավելին, օրըսորեն ճապոնիայում խորանում է այն գիտակցությունը, որ արևմբույսն մասնագետներն ու անգլերենի իմացությունն անհրաժեշտ են ավելի ու ավելի մեծ հաղորդակցության վրա հիմնված ու միջազգային կողմնորոշում ունեցող

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> **Takao Suzuki**, Giving English Education a Firmer Focus: An Interview with Suzuki Takao. *Japan Echo*, Vol. 26, № 5, October 1999.

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> Նույն տեղում:

աշխատանքների կատարման համար: Աշխարհի շատ երկներ արդեն իսկ շահել են անգլերնենի ու օտար լեզուների հմացությունից: Հնդկաստանը, որ վաղուց վարժ է անգլերնենի մեջ, ձևավորել է համակարգչային ծառայությունների մի ամբողջ արդյունաբերություն և այդ բոլորը՝ անգլերն: Մանկական մինչև Կարակաս ու Ուիադ ապրանքները, տեղեկատվությունը, ներդրումները և աշխատուժը համաշխարհային բոլոր սահմանները հատում են անգլերնենի օգնությամբ<sup>45</sup>:

Մշակութային ինքնության կորստի տագմապը կարևոր է արևմտյան մասնագետների և տարրական դպրոցում անգլերնենի ուսուցման քննադատության ըմբռնման համար: Սակայն մասնագետներից շատերը գտնում են, որ ճապոնական ինքնության ուժեղ զգացումը զարգանում է այլ լեզուների ու մշակույթների հետ շփման դեպքում: Շապոնական ազգային բնավորության ուսումնասիրության կազմակերպիչներից մեկը՝ Հայասի Տիկին, նշում է, որ «ճապոնական ինքնության տեսությունների» (*Nihonjinron*) ծաղկումը սկսվել է Տոկուցավանների սյոգունատի վերջին տարիներին (1854-1868), այլ կերպ ասած՝ երկրում արևմտյան քաղաքակրթության տարածման դարաշրջանի սկզբում<sup>46</sup>:

Արդի Շապոնիայում, չնայած անգլերնենի ազդեցության մեծացմանը, գոյություն ունեն նաև Արևմտութի և անգլերնենի գերիշխող դիրքի փոփոխման միտուներ: Զարգանում են առևտուրն ու գործարար կապերն ասիական երկրների հետ, նկատվում է հետաքրքրության աճ ասիական լեզուների հանդեպ<sup>47</sup>, ուստի Շապոնիայում անգլերնենի ուսուցման վրա սովորական շեշտադրումն անտեսում է ժամանակակից Ասիայում բիզնեսով զբաղվելու ներկայիս իրողությունը: Լեզուների քույզների սովորողների ավելի քան կեսն ուսումնասիրում է շինարեն: 2005 թ. Շապոնիայի 5.385 ավագ դպրոցներից 553-ը առաջարկում էին շինարենի ուսումնասիրում, որը երկու անգամ ավելի է, քան մեկ տասնամյակ առաջ: Նույն ձևով ուժեղանում է նաև կորեերնենի նկատմամբ հետաքրքրությունը: Ակսած 2005 թվականից՝ անգլերնենից ու շինարենից հետո այն դարձել է երրորդ ուսուցանվող լեզուն: Կրթության, մշակույթի, սպորտի, գիտության ու տեխնոլոգիաների նախարարությունը դրա հիմնական պատճառներից մեկը համարում է ասիական հարևանների հանդեպ հետաքրքրության աճը<sup>48</sup>: Չինարենի հանդեպ հետաքրքրությունը նաև վկայում է, որ ճապոնացիները վերահայտնագործում են իրենց ասիական արմատները: Նրանք ենթագիտակցորեն գգում են, որ չեն պատկանում արևմտյան քաղաքակրթությանը, ըստ այդմ՝ շրջադարձ են կատարում դեպի հարևան ժողովուրդների

<sup>45</sup> Տե՛ս Japan's Ambivalent English (ed.). The Japan Times, March 13, 2007:

<sup>46</sup> Տե՛ս **М. Н. Корнилов**, Օ տիպոլոգի յառակա կուլտуրի (յառակա կուլտуրա և տեօրիայի “Նիխոնդզин րոն” և “Նիխոն բոնկա րոն.” Վ հն.: Յառակա կուլտуրա և օբացետո և էպոխա ՀՏԲ. Մ., 1985, էջ 36:

<sup>47</sup> Շատերն այդ լեզուների կարիքը զգում են գործարար կապերի համար, իսկ ոմանը էլ սովորում են իրենց օտարերկրացի կնոջ կամ ամուսնու մայրենի լեզուն: Շապոնիայում աճում է այսպես կոչված «միջազգային ամուսնությունների» թիվը: 2005թ. նման ամուսնությունների թիվը եղել է 41.000, որը համարյա թե երկու անգամ գերազանցում է տաս տարի առաջ արձանագրված ցուցանիշը (տե՛ս Tony McNicol, Students Spread Their Wings. The Japan Times, Dec. 12, 2006): Մյուսներն էլ լեզուներ են սովորում, քանի որ մտադիր են հանգըտի անցնելուց հետո առժամանակ ապրել Շապոնիայից դուրս:

<sup>48</sup> Ծնունդների անկումը, ազգաբնակչության ծերացումը և աշակերտներ հավաքագրելու դպրոցների դժվարությունները կարող են լինել շինարենի դիրքերի անրապնդման մեկ այլ պատճառ: Դպրոցները փորձում են դասավանդել նոր առարկաներ և դասնալ ավելի միջազգային, քանի որ այդ դեպքում նրանք կարող են աշակերտներ գրավել և գոյատևել:

լեզուները: Օրինակ, Օքիրինի «Կոնֆուցիոսի ինստիտուտի»<sup>49</sup> տնօրեն Ա. Սիցուտայի կարծիքով, «հնարավոր է, որ ճապոնիայում արդեն իսկ տեղի է ունենում մշակութային հավասարակշռության վերաձևավորում... Անգլերենը համաշխարհային լեզու է, բայց եթե նայում ենք, թե որ է գնում աշխարհը, ապա միայն անգլերենի իմացությունը բավական չէ... ճապոնացի ինտելեկտուալների գոնեն կեսը պետք է խոսի չինարեն, չինացիները մեր ամենակարևոր հարևանն են»<sup>50</sup>:

Վերը ասվածից հետևում է, որ ճապոնիայում ներգաղթողները և օտարերկրացիները ավանդաբար դժուկել են որպես երկրի երնունշակութային ինքնությանը սպառնացող վտանգ: Ըստ այդմ՝ 1990-ական թվականներին ճապոնական ազգային համալսարաններում «ակադեմիական ապարտեհոդ» դրսորումները և «անգլերենի լեզվական իմպերիալիզմ» առնչությամբ մտահոգությունները պետք է համարել մշակութային սուվերենության կորստի տագնապի արտահայտություն: Դա արտաքնապես նման է հետզադութային ու ասիական երկրների այն մտավախությանը, որ իրենք կորցնեն մշակութային ինքնությունը և կիայտնվեն Արևոտքի տիրապետության տակ:

Սակայն ներկայիս ճապոնիան ոչ նախկին գաղորդ է և ոչ էլ գարգացող երկիր, այլ տնտեսական հզոր գերտերություն է, և արևմտյան ազդեցության ու ճապոնիայի մշակութային սուվերենության հետ կապված մտահոգություններն առնչվում են ճապոնական ազգային պետության համաշխարհայնացմանը կամ զորայացմանը: Ճապոնիայում մտահոգված են, որ քուլանում է կասպն անցյալի բարձր էսքտիլիկական մշակույթի հետ, և իրենք ավելի ու ավելի են հայտնվում ազգային սահմաններ չճանաչող աշխարհաբարաքացիական զաղափարի ազդեցության տակ, բայց այս անգամ նրա օգնությամբ, ինչն անվանում են «գլոբալիզմ», «փնտերնետ» և «անգլերենի լեզվական իմպերիալիզմ»: Արևմտյան ազդեցության և զորայացման հանդեպ կասկածները դարձել են օրենքների հիմք: Արյունաբերական զարգացած երկրների շարքում ճապոնիան միակն է, որ մեխանիկորեն քաղաքացիություն չի շնորհում այն երեխաներին, որոնք ծնվել են իր տարածքում: Ճապոնիայում դեռևս գերիշխող է այն մտայնությունը, որ օտարերկրացիների մասնագիտական գիտելիքները պետք է օգտագործվեն, բայց նրանք պետք է օտարված լինեն ճապոնական հասարակությունից:

Այսուհենդեռձ, ներկայումս ճապոնական ավանդական ինքնությունը փորձության է ենթարկվում մի ճապոնիայում, որ աճում է համաշխարհային կառույցների ու անգլերենի դերը, ինչպես նաև օտարերկրացի մասնագետների ու ներգաղթողների թիվը: Ազգաբնակչության ծերացման և ծնունդների անկնան հետ կապված՝ քննարկվում է օտարերկրյա աշխատումի ներմուծման հարցը: Եվ ինչպես գրում է Կիոսոյի ու Մթանֆորդի համալսարանների պլոտեստը Հարումի Բեքուն,

<sup>49</sup> 2004 թ. Չինաստանը իմնարդեց առաջին «Կոնֆուցիոսի ինստիտուտը» Տաշրենդում, իսկ ներկայումս մոտ է նման հարյուր ինստիտուտ իմնելու ծրագրի իրականացմանը: «Կոնֆուցիոսի ինստիտուտը», ինչպես գերմանական «Գյորեի ինստիտուտը» կամ «Բրիտանական խորհրդը», լեզվի և մշակույթի ուսումնասիրության կենտրոն է: Ասիայում գոյություն ունեն նման տասնյակ ինստիտուտներ, այդ թվում՝ մեկը Տոկիոյում՝ իմնաված Օքիրինի համալսարանի (Obirin University) հետ համատեղ: 2008 թ. Երևանի Վ. Բբյուտիկի անվան պետական լեզվաբանական համալսարանում ևս Չինաստանի կառավարության աջակցությամբ հիմնադրվել է չինարենի ու չինական մշակույթի կենտրոն, և որպես գործընկեր բուհ նշանակվել է Շանսի համալսարանը:

<sup>50</sup> Tony McNicol, նշվ. հոդվ.:

«այն օտարերկրացիները, որոնք իրենց ապագան կապում են այս երկրի հետ, դժվարությամբ են հանդուժում էթնիկ միատարրության վրա հիմնվող ազգային մի խնդնություն, որը մշակութային առունով մերենայարար բացառում է այլ էթնիկ խմբերի քաղաքացիությունը և մերժում նրանց ավանդը»<sup>51</sup>: Ինչպես ինքնությունն ընդհանրապես, ճապոնական ինքնությունը և կառուցված է էթնիկ «տարանջատման» հիմքի վրա, որը ոչ ճապոնացիներին տեսնում է ճապոնացիներին հակառակ դիրքերում՝ դասի, մշակույթի և էթնիկության առումով<sup>52</sup>:

Ճապոնիան հետաքրքիր օրինակ է քննարկելու համար, թե ազգային ինքնամեկուսացման երկարատև պատմություն ունեցող երկիրն ինչպես է արձագանքում իր մշակութային ինքնությանը մարտահրավեր նետող միջազգայնացմանն ու գորբացմանը: Եվ «ակադեմիական ապարտեհիդի» ու «անգերենի լեզվական իմպերիալիզմի» շուրջ 1995-2005 թթ. տեղի ունեցած քանակեներն արդյունք են ճապոնական ազգային պետության հանաշխարհայնացման կամ գլոբալացման: Դրանք վկայում են նախ՝ համաշխարհային տնտեսության մեջ ճապոնիայի գտնվելու մասին, երկրորդ՝ ի հայտ են թերում այնպիսի գաղափարախոսությունների գոյությունը, որոնք միտում ունեն ճապոնիան պահպանելու որպես մշակութային առումով միատարր երկիր: Երրորդ՝ «ակադեմիական ապարտեհիդի» դրսորումները և «անգլերենի լեզվական իմպերիալիզմի» քննարկումները, ինչպես նշվեց Վերը, առնչվում են արդի դարաշրջանում ազգային պետությունների ու մշակույթների վերածնավորումների հետ: Միջազգայնացման և գլոբալացման հետևանքով Արևելքի երկրները մտնում են ինքնության ճգնաժամի նոր դարաշրջան, որը նրանք փորձում են հաղթահարել իրենց ավանդական մշակույթի վերահայտնագործման և արդիականության հետ վերջինիս սինթեզման միջոցով:

**Б. Ж. ГИШЯН – Глобализация и проявления традиционности в современной Японии.** — В статье исследуются японские и западные точки зрения о роли западных специалистов и английского языка в становлении современного японского общества и экономики. Постоянное присутствие многочисленных западных специалистов в Японии и возрастающее влияние английского в послевоенный период анализируются в контексте глобализации японского национального государства и трансформации японской идентичности. В статье подчеркивается важность вышеупомянутого подхода для понимания послевоенного японского общества.

<sup>51</sup> **Harumi Befu**, Hegemony of Homogeneity: An Anthropological Analysis of Nihonjinron: Trans Pacific Press, 2001, p. 84.

<sup>52</sup> Այդ մասին տես **John Lie**, The Discourse of Japaneness. In Japan and Global Migration: Foreign Workers and the Advent of a Multicultural Society. Edited by Mike Douglass and Glenda Susan Roberts. London and New York: Routledge,էջ 70-90: